

3177

616.9

---

S-38

616.9

S-38

№ 1.

ՄԱՆՏԱԿԻ ԿԱՄ ԶՈՒՄԱ  
103

130

Կազմից Ալեքսանդրապոլու ժողովրդի համար

ԲՃ. Ն. ՏԵՐ-ԻՍԱՀԱԿԵԱՆՅՑ

12002



ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՈԼ

1901

«Թէ արկահորիզմի և թէ ուրիշ բոլոր վարակիչ հիւանդութիւնների դէմ կռուելու առաջին պայմանն է ազգայնական, բառիս ընդարձակ նշանակութեամբ: Հարկաւոր է անվերջ կրկնել այն վնասը, որը առաջ է գալիս յիշեալ ակտներից: Այդպիսի ռեկլամներ պէտք է տեղաւորել դեղատոմսերի, զանազան տեսակ պայմանագրերի, տետրակների ու դասագրքերի վրայ, նաև այն բոլոր արկղների երեսին, որոնցով ծախվում են ծխախոտ և զանազան իրեր, երկաթուղիների սոմսակների, երեխանց խաղալիքների և մինչև անգամ շուկաներում ծախվող թաշկինակների վերայ:

Անհրաժեշտ է տների պատերի վրայ ահագին տառերով գրել բոլոր սպառնացող վտանգների մասին և նոյնը յաճախակի տպագրել պարբերական թերթերում և այլն:

Մի խօսքով անհրաժեշտ է զօրեղ, ձանձրացուցիչ, բարձրագոյ ռեկլամ, այնպէս որ ոչ ոք չկարողանայ անցնել փողոցով, կառք մտնել, ձեռքն առնել լրագիր,

որ չ'հանդիպի այն պարզ մտքին, որը դուք ամեն կերպ աշխատում էք ներշնչել ժողովրդին:»

Պրոֆ. Փօլեռ:

Համակրելով պրոֆ. Փօլեռի վերոյիշեալ կարծիքին և համոզուած լինելով որ ժողովրդին քանի յաճախ և շատ կրկնես միևնոյն միտքը, այնքան նա լաւ և շուտ կըմբռնէ ասածը, թող ատենք մեզ կազմել նորից մէկ գրքոյի ժանտախտի մասին, չնայելով որ այդ բովանդակութեամբ կայ արդէն մի երկու ժողովրդական հրատարակութիւն:

Տ. Իս.

616.9

S-39  
6100


194-55

Այ

№ 1.



# ԺԱՆՏԱՆՈՏ ԿԱՄ ՉՈՒՄԱ



Կազմեց Աղեքսանդրապօլու ժողովրդի համար

Ռ. Ն. ՏԷՐ-ԻՍԱՀԱՆԵՍՆՅ

ԱԼԷԿՍԱՆԴՐԱՊՈԼ

Տպարան Գ. Ս. Ստանյեւսկցի

1901

10401

16544

010

12-481

Дозволено Цензурою. Тифлисъ, 7-го Апрѣля 1901 г.

## ԺԱՆՏԱԽՏ ԿԱՄ ՉՈՒՄԱ

Ոչ մի տարափոխիկ հիւանդութիւն այնպէս սոսկալի անուն չունի, ինչպէս խոլէրա՞ն և Ժանտախտը կամ չո՞ւմ, մանաւանդ վերջինս, որին ժողովուրդն անուանում է «մարդկային մտրակ» կամ «սև մահ»: Ժանտախտն այս անունն ստացել է իւր աւերիչ բնատրութիւնից, որովհետև թէ հին և թէ նոր ժամանակներում, ուր որ նա յայտնուել է, թողել է իւր յետևից անմարդաբնակ գիւղեր ու քաղաքներ, նոյն իսկ ընդարձակ նահանգներ:

Ամեն անգամ, երբ անպատրաստ ժողովուրդը ենթարկուել է այս սարսափելի մահտարածամին, միշտ գլուխը կորցրած՝ սկսել է փախչել իւր տուն ու տեղից, մի կերպ կեանքն ազատելու յուսով:

Ժանտախտը տարափոխիկ (կաշողական) հիւանդութիւն է: Նա փոխուում է հիւանդի ու մեռածի կամ նրանց շորերի և իրեղէնների միջոցով: Ժանտախտի թոյնը քամին չի կարող մի տեղից միւս տեղը տանել: Երբ որ մի տեղ ժանտախտ է երևում, պէտք է հաստատ գիանալ, որ հիւանդութիւնը անպատճառ ներս է բերուած վարակուած երկրից եկած մարդկանց կամ ուղարկուած ապրանքների հետ: Նա գիւղից գիւղ, քաղաքից քաղաք անցնելով՝ տարածուում է հեռու երկիրներ, կլանելով միլիոնաւոր զոհեր, ուր ազգաբնակութիւնը ապրում է կեղտոտ և անմաքուր տեղերում և վարում է առողջապահական կանոններին հակառակ կեանք: Բայց, չնայելով ժանտախտի սոսկալի բնաւորութեանը, նրանից կարելի է պաշտպանուել և վարակուած դէպքումն էլ բժշկուել:

Այժմ ամենեւին չեն կասկածում, որ այն երկրներում, որտեղ ժողովուրդը խելացի և մաքուր կեանք է վարում, ժանտախտը չի կարող տարածուել և եթէ որեւէ կերպով մուտք գործէ, այնուա-

մենայնիւ մեծ վնաս չի կարող տալ, որովհետեւ ժողովուրդը գիտակցօրէն պաշտպանուում է հիւանդութեան դէմ և չի համարիլ այն «Աստու պատիժ» կամ «դառն ճակատագրի արգիւնը»:

Մի ժամանակ կարծում էին, թէ ժանտախտի բունը Եգիպտոսի նեղոս գետն է, ինչպէս որ Գանգէսը խոլերայի համար: Սակայն վերջին ուսումնասիրութիւնները ցոյց տուին, որ բացի Եգիպտոսից, Հնդկաստանի սրբաղան գետը, Գանգէսը, բուն է թէ խոլերայի և թէ ժանտախտի: Ժանտախտը բաւական հին հիւանդութիւն է: Այս ախտը կար դեռ Քրիստոսից 2—3 դար առաջ, որի մասին գրել են ժամանակակից պատմիչները: Քրիստոսից 542 տարի յետոյ, ժանտախտը Եգիպտոսից անցել է Եւրոպա և մեծ վնասներ է հասցրել: Բայց նա ոչ մի անգամ այնպէս սոսկալի աւերում չէ առաջացրել, որքան XIV-րդ դարում: Այդ ժամանակ հիւանդութիւնն սկսուել է Զինաստանում, այնտեղից փոխուել է Հրնդկաստան, Պարսկաստան. իսկ յետոյ Կովկասի վրայով անցել է Ռուսաստան, Լեհաստան, Գերմանիա,

Փրանսիա, Իտալիա և Սպանիա: 13 տարուայ ընթացքում համաճարակ հիւանդութիւնը կոտորել է Եւրոպայում 25 միլիոն մարդ, իսկ եթէ հաշուի առնուի նաև Ասիայի բոլոր երկրներում կոտորածները, կստացուի 43 միլիոն մարդ: Այսպիսի մեծ կոտորած չի եղել և չի լինիլ ոչ մի պատերազմի և ոչ մի ուրիշ վարակիչ հիւանդութեան ժամանակ: Յիշեալ համաճարակը Եւրոպայում շարունակ կոտորում էր թոյլ կերպով մինչև 17-րդ դարը, իսկ այդ ժամանակ նա կրկին ստացաւ լայն ծաւալ և միայն Լոնտոնում կոտորեց 68,000 հոգի: Այս դէպքից յետոյ հիւանդութիւնը երևացել է միայն Եւրոպայի ծովափնեայ քաղաքներում, եթէ չհաշուենք Մոսկուայի դէպքը 1771 թուին, երբ օրական կոտորում էին 600 — 1000 հոգի: Այդպիսով գերեզման մտան քաղաքացիներից 56,000 հոգի:

Այս սաստիկ դէպքերը հետզհետէ դարձրին ուսումնականների ուշադրութիւնը իրանց վրայ և շրնորհիւ հիւանդութիւնների ուսումնասիրութեանը, ժողովուրդը, քանի գնում, աւելի ու աւելի ապահով

է զգում իրան այգպիսի սոսկալի կոտորածներից: Վերջին դարում թէպէտ և պատահել են անընդհատ համաճարակներ, բայց ոչ մէկը այնպիսի մեծ ծաւալ չէ ընդունել, ինչպէս լինում էին առաջ: Յիշենք այս դարում պատահած դէպքերը: 19-րդ դարի առաջին կեսում Թուրքիայի մէջ մի քանի անգամ կրկնուել է ժանտախտը թէ ծովափնեայ քաղաքներում և թէ երկրի ներսը: 1805-ի համաճարակը օրական 400 հոգի զոհ էր տանում Էրզրումում: 1881 թուին ժանտախտը Տրապիզոնում օրական կոտորում էր 100 — 200 հոգի: Վերջին անգամ նա տարածուեց 1839 թուին և հասաւ մինչև Կարս, Ալէքսանդրապոլ, Երևան: Չամախում և նրա շրջակայքում ժանտախտից մեռան մօտ 70,000 հոգի: 1802 — 1843 թիւը ժանտախտը շարունակ կրկնուելով անցել է Կովկասի դանազան քաղաքները և մեծամեծ վնասներ է հասցրել բնակիչներին: 1879 թուին ժանտախտը յայտնուեց հաշտարխանի Վերլեանկա գիւղում, բայց իսկոյն կարողացան առաջն առնել և չտարածուեց: Սրանից 7 տարի առաջ,

ժանտախտը նորից երևան եկաւ արևելեան երկր-  
ներում և մի քանի շաբաթուայ մէջ Զինաստանի մի  
քաղաքում մեռան 60000 մարդ: Կանտոն քաղաքում  
100 հիւանդից 95-ը մեռնում էին: Այս համաճարա-  
կը Զինաստանից անցաւ Հնդկաստան և ամենից ա-  
ռաջ երևաց Բոմբէյ քաղաքում: Բոմբէյը ծովափնեայ  
քաղաք լինելով՝ վարակուեց եկտոր նաւերից: Ժան-  
տախտի ներս սպրտուելն սկզբում աննկատելի ե-  
ղաւ, իսկ յետոյ հետզհետէ սուր կերպարանք ստա-  
նալով՝ հինգ-վեց ամսի ընթացքում կտտորեց 15000  
հոգի: Հնդկաստանի ժանտախտը դեռ չէ վերջացել  
և կտտորում է մինչև օրս շաբաթական մի քանի  
հարիւր մարդ:

1899 թուի յուլիս և օգոստոս ամիսներին ժան-  
տախտը յայտնուեց մեր երկրի սահմաններում, Կո-  
լորովկա գիւղում (Հաշտարխանի նահանգում): Ան-  
միջապէս միջոցներ ձեռք առան նրա առաջն առնելու  
և բարեբախտաբար, կարողացան վարակման դէմ  
կռուել: Նորերս դարձեալ լուրեր են գալիս, թէ  
ժանտախտը յայտնուել է Անգլիայի Գլազգօ քաղա-

քում, Ալէքսանդրիայում, Կ. Պոլսում, Էրզրումում  
և այլն, բայց թէ ինչով կը վերջանայ, ապագան ցոյց  
կը տայ այդ:

Ուրեմն ժանտախտը հեռու չէ մեղանից: Մնում  
է, որ մենք զգուշութեան միջոցներ գործ դնենք  
վտանգի չենթարկուելու համար և աշխատենք հէնց  
սկզբից նրա տարածման առաջն առնել, գործ դնե-  
լով այն միջոցները, ինչ որ սովորեցրել է մեզ ժա-  
մանակակից գիտութիւնը:

Գիտնականները արդէն հաստատ գտել են, որ  
ժանտախտը միւս վարակիչ հիւանդութիւնների, օր-  
խտերայի, դիֆտերիտի, տիֆի նման, ունի իւր վա-  
րակիչ թոյնը, որ ստացւում է բացիլներից կամ միկ-  
րոքներից: Միկրոքները մտնելով մեր կազմուածքի  
մէջ արտադրում են իրանցից թոյն և այդպիսով թու-  
նաւորում են մեր արիւնը և քայքայելով կազմուածքը,  
մահ առաջացնում: Ժանտախտի, ինչպէս և բոլոր միւս  
վարակիչ հիւանդութիւնների միկրոքները հասարակ  
աչքով անտեսանելի են և միայն խոշորացոյցով նը-  
րանց կարելի է գիտել: Այս միկրոքը կամ բացիլը

հիւանդից կամ նրա իրեղէններից անցնում է առողջին, աճում է նրա մարմնի մէջ և թունաւորում նրան: Ժանտախտի միկրոբը գտնուում է գլխաւորապէս հիւանդի ուռուցքների մէջ, որով կարելի է վարակել նոյն իսկ կենդանիներին, երբ թոյնը սրսկում են նրանց կաշուի տակ: Միկրոբի աճելուն նպաստում են այլևայլ տեսակ նեխուղ նիւթեր, բայց նա աւելի արագ բազմանում է կենդանիների մէջ, որովհետև նրանք այդտեղ գտնում են զարգանալու ամենանպաստիչ թէ սնունդ և թէ հարկաւոր տարրութիւն: Գենդանիների կազմներից ամենից զգայուն է մկների կազմը, և նկատուած է ընդհանրապէս, որ համաճարակների սկզբից թէ դաշտերում և թէ տըներում, նրանք դուրս են թափւում բներից, թքում են արիւն ու սատակում: Հասկանալի է, որ սրանք մէկ տանից միւս տունը մտնելով տարածում են հիւանդութիւնը: Համաճարակի տարածուելուն խիստ նպաստում են և ճանճերը: Սրանք նստում են հիւանդի վրայ, ապա թուշում, նստում են առողջի վրայ և կծելով նրան, վէրք են բաց անում ու հի-

ւանդից բերած թոյնը մտցնում են նրա մէջ:

Որովհետև կենդանիները ազատ չեն վարակուելուց և վարակուելու տարածելուց, ուստի համաճարակի միջոցին օրէնքով պահանջւում է տանու կենդանիներին, թուշուններին կամ առանձնացնել և կամ կոտորել, այսպէս, օրինակ կոտորում են շներին, հաւերին, կատուններին և այլն:

Ժանտախտի թոյնի աճելուն նպաստում է խոնաւ օդը, հողը և անմաքրութիւնները, այնինչ լոյսը և չորութիւնը աննպաստ պայմաններ են միկրոբի համար: Այս իսկ պատճառով անհրաժեշտ է ապրել լուսաւոր և չոր բնակարաններում, քանի որ նեղ և խոնաւ բնակարանները համաճարակի ժամանակ միշտ երկիւղալի են: Թէև ժանտախտի համար եղանակները նշանակութիւն չունին, բայց և այնպէս նրկատուած է, որ ամառուայ շոգերին երբեմն ժանտախտը թուլանում է շնորհիւ չոր օդի: Միկրոբները մեռնում են բարձրաստիճան տարրութեան մէջ, ուստի եռացրած ջրերի ու եփած կերակուրների մէջ նրանք չեն կարող մնալ: Այս էլ պէտք է ի

նկատի ունենալ, որ հիւանդութեան թոյնը աճում է ոչ միայն հողի երեսին, այլ և նրա տակի շերտերում, մի քանի մատնաշափ խորութեամբ:

Արդէն ասացինք, որ ժանտախտը բնաւորութեամբ նման լինելով միւս վարակիչ հիւանդութիւններին, ունի նրանց պէս զարգացման վաղտնի և յայտնի շրջաններ, սրբնթաց և թեթեւ դէպքեր: Հիւանդութեան գաղտնի շրջանը տևում է 7-ից—15 օր: Այս միջոցում հիւանդն ամենեկին չի զգում իւր վարակուելը, բացի թեթեւ թուլութիւնից: Ռայց գաղտնի շրջանն անցնելուց յետոյ հիւանդութիւնը երևան է գալիս և սաստկանալով տևում է 3—5 օր: Առհասարակ նկատուած է, որ եթէ հիւանդն այս 3—5 օրը յաջող անցկացրեց, ապա յուսալի է, որ կ'առողջանայ:

Այժմ անցնենք հիւանդութեան նկարագրութեանը: Ժանտախտով հիւանդացողն սկզբում դուրսնում է և դողը տևում է 2—3 ժամ, իսկ յետոյ սկսում է տաքացնել, որից ուժասպառ է լինում: Հիւանդը գանգատւում է թուլութիւնից, զգում է

սաստիկ ծարաւ, նրա աչքերը շառագունում են, արիւնով լցում, տրամադրութիւնը վատանում է. կուրծքի վրայ ճնշումն է զգում, սիրտը խառնում է, մազձը լինում է դեղին: Սիրտը քանդուելուց յետոյ հանդատանում է, սակայն այն հանդոտանալը մի տեսակ թմրութիւն է, որ նրան ձգում է անզգայութեան մէջ: Հիւանդը դէն է տալիս, չի դադարում անկողնում, ուզում է տեղից փախչել: Եթէ հիւանդութիւնը ծանր է, ապա հէնց առաջին օրում դուրս են գալիս ուռոյցքներ (բուբոն), որոնք մինչև համեկը սաստիկ ցաւ են պատճառում ուսած տեղերում, աճուկներում, թեւերի տակը և պարանոցի վրայ: Ուռոյցքները թեթեւ դէպքում երևում են 3—4 օր յետոյ: Հիւանդի լեզուն ծածկւում է սպիտակ փառով, շարունակւում է փխսումն. կաշին չորանում է և տաքանում, մէզը և աղբը չի կարողանում պահել:

Երբ հիւանդի կազմուածքը ամուր է, կարողանում է ցաւերին դիմանալ, ապա ուռոյցքները հասնելով թարախակալում և բլշում են:

Իսկապէս մահացու են համարուում պարանոցի ուռուցքները, որոնք գեռ չը բլած, հիւանդը մեռնում է: Բացի ուռուցքներից, հիւանդի մարմնի վրայ երևում են մեծ բծեր, որոնք լինում են մուգ կարմիր, կապոյտ և սև գոյնի:

Ուռուցքները դուրս գալուց 1—2 օր յետոյ, հիւանդն սկսում է քրտնել. քրտինքն յայտնուում է նախ պլսի վրայ, յետոյ երեսին, ապա կուրծքին և բոլոր մարմնին: Հիւանդն ունենում է 40—41% տաքութիւն, որը իջնում է հետզհետէ կամ մի անգամից: Այս ժամանակ հիւանդի տրամադրութիւնը լաւանում է, ցաւերը մեղմանում են, ախորժակը բացւում է, ուշքը վրան է գալիս և հիւանդը քիչ—քիչ առողջանում է:

Հիւանդութեան ծանր դէպքերում հիւանդի անհանգստութիւնը շատանում է և նա շարունակ գառանցում է ու յանկարծ մեռնում: Պատահում են դէպքեր, որ քիչից, թորերից արիւն է գալիս, սուքերն ու ձեռքերը ցնցւում են, հիւանդը շուտ—շուտ և համարեա անընդհատ զկուտում է ու մեռնում:

Հիւանդութիւնը եթէ սրընթաց բնաւորութիւն ունի, հիւանդը մեռնում է 3—4 ժամում:

Մենք նկարագրեցինք հիւանդութեան ծանր տեսակները: բայց յաճախ մարդիկ վարակւում են թեթիւ կերպով, այնպէս որ նրանց չէ էլ նշուի ճշմարտութիւնը: Եթէ վարակուած են ժանտախտով: Այսպիսիներըն առհասարակ ունենում են 38—39% տաքութիւն 7 օր: Հիւանդութեան նշանները առաւօտները թուլանում են, իսկ երեկոները սաստկանում: Մարմնի վրայ ուռուցքներն ու բծերը երևում են 3—4 օրում, սրից յետոյ սկսում են քրտնել և ապա հիւանդը առողջանում է: Այսպիսի հիւանդներն աւելի նպաստում են հիւանդութեան տարածուելուն: Նրանք ման են գալիս անարգել և իրանց հազորդակցութեամբ վարակում են ուրիշներին և ցաւը տարածում:

Ժանտախտի սրընթաց դէպքի նկարագիրն այսպէս է անում Լարէ բժիշկը. — պատերազմի ժամանակ, — ասում է նա, — ժանտախտով հիւանդները սոսկալի ցնցումով վայր էին ընկնում, նրանց երեսներն այլանդակւում էին շրթունքներն ուռչում, լե-


գունը ուրա էր գալիս բերանից. դուրս էր գալիս գարշահոտ լորձուկ (թուր): Հիւանդների աչքերն անշարժ էին ու բնից ուրս ընկած, կաշին գունատ էր: Հիւանդների մարմինը ամբողջապէս ենթարկուում էր ջղաձգութեան. սարսափելի տանջանքներից կատաղի կերպով գոռում էին և գետին էին գլորուում: Մեռնելուց յետոյ մարմինները ծածկուում էին թաբախակալած բծերով»:

Հիւանդի հասակը և դրութիւնը միջոց են տալիս առաջուց գուշակել, թէ ինչ ելք կունենայ ժանտախտով հիւանդացողը: Յայտնի է, որ ժանտախտն համաճարակի սկզբում և վերջում թոյլ է լինում: Պէտք է ի նկատի ունենալ, որ ուռույցքների յայտնուելը լաւ նշան են, ոտովհետև ուռույցքները գուրս են գալիս հիւանդութեան երկար տևելուց: Այս դէպքում եթէ հիւանդը կարողացաւ 3-4 օր եւս ապրել, ապա յոյս կայ, որ կ'առողջանայ: Հիւանդի տարիքը մեծ նշանակութիւն ունին ցաւին դիմանալու խընդրում: Ընդհանրապէս փոքրահասակները և հասակաւորները ցաւին դժուար են դիմանում, մինչդեռ մի-

շահասակները լաւ են տանում ցաւի սաստկութիւնը: Պարանոցի ուռույցքները, բերանի կամ փորի արիւնահոսութիւնը, բծերը նոյնպէս և սաստիկ դառանցելը վատ նշան պէտք է համարել:

Ժանտախտի ժամանակ զգուշութիւնն աւելի մեծ նշանակութիւն ունի, քան թէ բժշկութիւնը: Չատ մարդիկ համաճարակի ժամանակ զոհ են դնացել հէնց նրա համար, որ արհամարել են ամեն խելացի միջոցներ և անզգոյշ են վարուել իրանց սպառնացող վտանգի դէմ, կարծես դիտմամբ կամեցել են ցաւը փորձել: Պէտք է բոլորովին կարել յարաբերութիւնները վարակուած տների և թաղերի հետ: Կասկածելի կարծուած իրերը պէտք է կամ այրել կամ արտաջինջ անել զանազան միջոցներով: Ախտահանութեան նպատակն է ոչնչացնել ժանտախտի թոյնը, որը երկար միջոց ապրում է նեխուող ու փթող նիւթերի մէջ: Հիւանդութեան թոյնը երկար ժամանակ իրանց մէջ պահում են գլխաւորապէս հետևեալ նիւթերը՝ լուսարի բուրդը, բամբակը, ձիու մաղը, մետաքսը, գանձապանը, լուսարի թիւնները, բրդէ,

1003  
10403



մետարսէ, բամբակէ գործուածքները, սպունգը, թուզ-  
թը, գիրքը, փետուրները, հին շորերը, մետաղները,  
փողը, ճարպը, չոր մրգերը, ծաղիկները: Հացահա-  
տիկները երկիւզալի չեն: Ժանտախտի պատմութիւ-  
նը ցոյց է տալիս, որ հիւանդութիւնը փոխուած է  
կպչելով հիւանդից կամ վարակուած իրերից: Եթէ  
կարողանանք հիւանդին կամ նրա գործածած իրերը  
մեղանից հեռացնել, վարակման առաջը կանոնի:  
Հիւանդի շուրջը եղած օդը վարակուած լինելով,  
փտանգաւոր է շրջապատողների համար: Թէպէտ  
միկրոօրգանքն օդի միջով չեն անցնում, բայց միանա-  
լով օդի մէջ յողացող անտեսանելի մարմինների հետ  
օդը ներշնչելիս՝ մտնում են մեր մէջ և մեզ վա-  
րակում: Թէ որ աստիճան հիւանդի իրերը վնասա-  
կար են, այդ բանին կարող են օրինակ լինել հե-  
տևեալ դէպքերը:

Մի վանրում մեռնում է ժանտախտով վարակ-  
ուած մի մարդ: Նրա թղթերը փակուած են մի արկ-  
ղի մէջ ու պահում: Դէպքից չորս տարի յետոյ, վա-  
նահայրը բաց է անում արկղը և վարակուած է թըղ-

թերից ու մեռնում: Վանահօրից վարակուած են մի-  
աբանութեան միւս անդամները ու նոյնպէս մեռնում:

Մի ուրիշ դէպք պատահում է Չմիւռնիայում:  
Այստեղ մի մարդ մեռնում է ժանտախտից նրա օրդին  
հօր իրեղէնները ծրարում պահում է ու դնում Եւրոպա:  
Երեսուն տարի յետոյ նա վերադառնում է Չմիւռնիա  
և սկսում է գործածել հօր իրերը: Արանցից նա վա-  
րակուած է ու մեռնում:

Արդէն վերկն ասուեց, որ ժանտախտը զալտնի  
շրջանում շատ զգալի չէ, բայց յետոյ ստանում է  
սուր կերպարանք, ուստի ցանկալի է որ համաճարակի  
ժամանակ թեթի հիւանդութիւններ զգալիս, առանց  
զանցառութեան վաղօրօք բժիշկ հրաւիրուի: Իսկ ուր  
որ բժիշկ չկայ կամ ուշանում է, կարելի է գործ  
դնել հետևեալ նախապաշտպանողական միջոցները.  
Նախ և առաջ պէտք է հիւանդի պարկած սենեակը  
հողմահարել, բաց անելով դուռն ու պատուհանը,  
որպէս զի օդը մաքրուի: Եթէ հիւանդը ջերմում է  
և անհանգիստ է, պէտք է օրական մի քանի անգամ  
թըջել մարմինը ջրախառն քացախով և ցամաքացնել

չորով: Կարելի է նաև ամբողջ մարմինը փաթաթել  
թրջած քաթանով: Գլխի ցաւը մեղմելու համար,  
պէտք է սառցապարկ դնել գլխին, կամ փաթաթել  
սառը ջրում թրջած քաթանով: Սոյն միջոցը կարելի է  
գործ դնել նաև դառանցելու դէպքում: Թևի և ա-  
ստուկների ուսուցչներին կարելի է դնել կտաւատի  
խաշիլ (թանխաշ), Եթէ հիւանդը ամբողջիւն ունի,  
պէտք է լուծողական տալ: Ծարաւը կտրելու հա-  
մար պէտք է տալ սառուցի կտորներ, սիրտը քան-  
դուելու ժամանակ — սրտի գտալին պէտք է դնել մա-  
նանեխի սպեղանի (գարշիչնիկ): Ուշագնացութեան  
առաջն առնելու համար, պէտք է հոտ քաշել տալ  
նաշատիրի սպիրտ, կամ խմացնել ջրով 20 կաթ.  
փալերիանի կաթիլներ: Որպէս կերակուր կարելի է տալ  
հիւանդին զիւրամարս բաներ. — մսաջուր, ձու, կաթ,  
խսկ ոյժերն ամբացնելու համար, խմացնել կոնիակ,  
գինի, արագ կէսը ջուր խառնած:

Այժմ ժանդախան այնքան երկիւզալի չէ, ինչ-  
պէս որ առաջ էր. այժմ եթէ հիւանդը նոր է վա-  
րակուել և քանի դեռ չէ սկսուել հիւանդութեան

ծանր շրջանը, կարելի է յուսալ, որ նրա առաջը  
կարելի է առնել, պատուաստելով հիւանդին ժան-  
տախտով թունաւորուած շիճուկով: Այդ շիճուկը  
ստացուում է ձիու արիւնից: Ձիու արեան մէջ մըտ-  
ցնում են ժանտախտի միկրոբը, գրանով թունաւոր-  
ւում է կենդանին և մի քանի օր ձին սկսում է տա-  
քացնել: Երբ որ տաքութիւնը իջնում է, սրսկում  
են նորից և այսպէս մի քանի անգամ կրկնելով՝ ձին  
ընտելանում է թոյնին, այնպէս որ այլևս թոյնը  
նրա վրայ չի ազդում:

Այնուհետև ձիու երակը կտրում են և արիւն են  
թողնում: Արիւնը օդի մէջ առ ժամանակ մնալով՝  
բաժանւում է երկու մասի. ջրային մասը, որ շիճուկ  
է կոչւում, կանգնում է երեսը, իսկ լերդանման մասը  
իջնում է տակը. վերջինս իբրև անպէտք բան, դէն  
են ձգում: Ահա այս շիճուկն է, որ սրսկում են մարդ-  
կանց կաշու տակը, ինչպէս զիֆտերիտով հիւանդ-  
ներին են անում և այս միջոցով համարեա հիւան-  
ների կէս մասն առողջանում է: Ժանտախտով չվա-  
րակուելու համար կարելի է զգուշութեան համար

առաջուց պատուաստել տալ, ինչպէս ծաղկի պատուաստելը: Այդ խորհուրդը տալիս ենք մանաւանդ համաճարակի ժամանակ:

Որպէս զի համաճարակը շտարածուի երկրից երկիր, տէրութիւնները կտրում են ամեն յարաբերութիւն վարակուած տեղերի հետ: Այդպիսի տեղից եկած ապրանքները նախապէս զգուշութեամբ ախտաջինջ են անում և ապա թոյլ տալիս երկրի մէջ մտնելու: Այդ արգելքը, որ կոչւում է կարանտին, կատարւում է այսպէս: Այն կէտերում, որտեղից մըտնում է կասկածելի երկրից եկող ապրանքը կամ մարդիկ, գորքեր են կանգնեցնում և սրանք թոյլ չեն տալիս առանց սկզբնական քննութեան երկիր մըտնել: Նշանակուած բժիշկները նայում են բոլոր անցնողներին, թէ մի գուցէ հիւանդներ լինին մէջերը: Հիւանդներին շոկում են և պահում են հիւանդանոցում, իսկ մնացածներին պահում են մօտ երկու շաբաթ:

Եթէ նրանց մէջ հիւանդներ լինին, բայց դեռ ևս գաղանի չըջանում, այդ երկու շաբաթում կ'երե-

ւայ հիւանդութիւնը. իսկ եթէ այդքան միջոցում հիւանդութիւնը չնկատուեց, անցաթուղթ են տալիս ու թողնում իրանց սահմանները:

Պարզ է, որ ինչպէս մարդկանց վրայ հիւանդութիւններն են քննում, այնպէս էլ նրանց բոլոր իրերը զանազան միջոցներով ակտաջինջ են անում և ապա յանձնում տէրերին: Այս գէպքում ժողովրդի պարտքն է ճշակցել տէրութեանը, որ մեր օգտի համար հաստատում է կարանտինը: Եթէ մենք իմանանք, որ մէկը առանց անցնաթղթի անցել է սահմանը, եթէ նա մինչև անգամ մեր ամենամօտ բարեկամը լինի, մեր պարտքն է յանձնել նրան տէրութեան ձեռքը, որպէս զի մի գուցէ նրա զանցառութեան պատճառով մենք էլ չվարակուենք:

Եթէ չ'նայելով բոլոր ձեռք առած միջոցներին, ժանտախտը տարածւում է, պէտք է գործ դնել մի քանի անհրաժեշտ պաշտպանողական միջոցներ: Այն միջոցներից ամենաառաջին պայմանը մարրութիւնն է, որովհետեւ, ինչպէս վերևն էլ յիշեցինք, ժանտախտի միկրոբը զարգանում, աճում է կեղտոտ տեղերում,

նեխուող նիւթերով ծածկուած խոնաւ հողի մէջ: Եթէ խոլերան կամ ժանտախտը Հնդկաստանում կամ Եգիպտոսում յայտնուելիս զարհուրելի կերպով կոտորում են բնակիչներին, այդ նրանից է, որ Գանդէսի և Նեղոսի ափերը լիքն են ապականութիւններով, մարդկանց ու կենդանիների դիակներով, որոնք շերմ արևի տակ նեխուելով, փտում են և աճեցնում վարակիչ հիւանդութիւնների միկրոբները: Այս բանին քիչ չէ օգնում արևելեան ժողովրդների վերջին ծայր անմաքրասիրութիւնը: Ուրեմն մաքրութիւնը իւրաքանչիւր մարդու առաջին հոգսը պէտք է լինի և քանի չեն սկսուել վարակիչ հիւանդութիւնները, պէտք է մաքրել տունը, բազը, փողոցը և այլն: Բաւական չէ միայն իւր սեպհական տունը մաքուր պահելը ընդհանուր մաքրութիւնը պահպանելու համար, պէտք է համերաշխ գործել, չխնայելով ոչինչ ծախս և աշխատանք: Թէև քաղաքային վարչութիւնների գործն է հսկել մաքրութեան վրայ, բայց ամեն քաղաքացի պէտք է իւր կողմից գործին աջակցէ, համոզուած լինելով, որ իւր անձի ապահովութիւնը

սերտ կերպով կապուած է դրացու առողջութեան հետ:

Որովհետև ժանտախտի թոյնը զարգանում է անմաքրութիւնների մէջ, այդ պատճառով պէտք է գետինը մաքուր պահել մարդկանց ու կենդանիների արտադրութիւններից: Պէտք է ունենալ կանոնաւոր արտաքնոցներ և ամեն օր այնտեղ կրաջուր լեցնել, որը մեռցնում է ժանտախտի թոյնը: Եթէ արտաքնոցներում հորեր ունենալը գժուար է, պէտք է անմաքրութիւնները լցնել տակառների մէջ և քաղաքից դուրս կրել տալ. յամենայն դէպս, գետինը չպէտք է թրջել, իսկ եթէ թրջուի պէտք է գետնի խոնաուութիւնը չորացնել մոխրով: Լուացքի շուրջ նոյնպէս ցանկալի է լցնել առանձին շինած հորերի մէջ, բայց եթէ հորեր չկան, կարելի է ցրիւ տալ արևկող տեղերը, որպէս զի շուտով ցամաքի:

Երկրորդ կարևոր խնդիրը բնակարանի խնդիրն է: Բնակարանը պէտք է լինի չոր, լուսաւոր և ընդարձակ: Ներքնայարկերը, իբրև խոնաւ, վնասակար են: Ուր որ մի երկու սենեակում ապրում են բազ-

մամարդ ընտանիքներ, այդպիսի տեղերում հեշտ կարելի է վարակուել: Համաճարակի ժամանակ ցանկալի է, որ քաղաքը առանձին վարձած տներ ունենայ և այդպիսի խոշոր ընտանիքներն այնտեղ տեղավոխէ: Առհասարակ երբ մի սենեակի մէջ շատ մարդ է ապրում, այդ սենեակում օդը սաստիկ ապականւում է, մանաւանդ գիշերը: Իսկ յայտնի է, որ անմաքուր օդը վնասակար է մարդու առողջութեան համար. համաճարակի միջոցին, աւելի ևս: Ժանտախտի թոյնը յաջող դարգանում է փակ օդի մէջ, այդ պատճառով, պէտք է դուռ-հրդիք բանալ: Լաւ է ցուրտ, բայց մաքուր օդում լինել, քան թէ անմաքուր օդ ներշնչել:

Նկատուած է միշտ, որ ժանտախտը հեռուում է սովին, ժողովրդական աղետների միջոցին, երբ ժողովրդի ստուար մեծամասնութիւնը ուտելիք չէ ունեցել, այն ժամանակ ժանտախտը վրայ է հասել և միլիոնաւոր մարդիկ կոտորուել են ուտելիքի պակասութիւնից կամ վատ սնունդից: Լաւ օրինակ կարող է լինել հնդկաստանի վերջին համաճարակը,

երբ ժողովրդի մի մասը կոտորում էր սովից: Ժանտախտի ժամանակ թշուառին օգնել, կերակրելը նշ [թէ միայն բարի գործ կատարել է նշանակում, այլ դա ինքնապաշտպանութեան միջոց է: Այդ է պատճառը, որ ժանտախտի ժամանակ ամեն տեղ շտապում են յանձնաժողովներ կազմակերպել ժողովրդին օգնելու համար, որոնք հիմնում են ձրի ճաշարաններ և թէյատներ: Սրանց գործն է տալ մարդկանց սնունդ, նոյնպէս և հողալ ազգաբնակչութեան մաքրութեան վրայ:

Համաճարակի ժամանակ ներելի չէ չափազանց ֆիզիկական աշխատութիւնները, որոնցով մարդու կենսական ոյժերն սպառւում են և տրամադրութիւն է ծագում հիւանդանալու: Նուազած, ոյժից ընկած մարդու վրայ թոյնն աւելի է ազդում, որովհետև մարդու թոյլ կազմուածքը չի կարող դիմադրել թոյնի աւերիչ զօրութեանը: Այդ է պատճառը, որ ժանտախտով աւելի շուտ վարակւում են արեւցողները, անկանոն կեանք վարողները, որոնց քայքայուած մարմինը իսկոյն կնխարկւում է հիւանդու-

Թեան:

Ժանտախտից վախեցող մարդիկ ընկնում են նեարդային դրուժեան մէջ և տրամադրւում հիւանդանալու: Վախիտ մարդը շարունակ լարուած գրուժեամբ մտածում է ժանտախտի մասին: Նա վախենում է ուտել, խմել, ամեն մի շնչին ցաւ ներան ձգում է ահ ու դողի մէջ: Այգալիսիները գիշեր ցերեկ հանգիստ չունին, որի պատճառով թուլանում է մարմինը անսնունդ մնալուց և անհանգստութիւնից, քայքայւում են նեարդերը այնպէս որ տրամադրւում է շուտով վարակուելու: Սրանց անհրաժեշտ է ունենալ հոգու արիութիւն: Թեթե հիւանդութիւններից չպէտք է շփոթուեն ու գլուխները կորցնեն և համոզուած պէտք է լինին, որ ժանտախտին անգամ կարելի է յաղթել:

Քանի որ միները մարդկանցից շուտ են վարակւում, ուստի պէտք է ամեն կերպ աշխատել նրանց կոտորել: Պէտք է տան մէջ դանուած ծակերը ծածկել և չթողնել, որ նրանք դուրս գան, կամ դեղերով ոչնչացնել: Նոյն զգուշութիւնը պէտք

է գործ գնել ճանճերի վերաբերութեամբ. հարկաւոր է նրանցից պաշտպանել ուտելեղէնները, մանաւանդ մրգերը. թէ տներում և թէ խանութներում պէտք է ծածկել մրգերն ու ուտելեղէնները:

Տում նիւթերն առհասարակ երկիւղալի են: Եփած ուտելիքը կասկածելի չէ, որովհետեւ, ինչպէս գիտենք, ժանտախտի միկրոբը 60 աստիճան տարութեան մէջ ոչնչանում է: Իսկ եթէ ուտելիքը չի կարելի եփել, պէտք է մաքուր լուանալ:

Հիւանդութեան որեէ գէպրում չպէտք է գանցառութեան տալ և բժիշկ հրաւիրել:

Համաճարակի ժամանակ մեծ ծառայութիւն են մատուցանում հիւանդանոցները, միայն ցաւալին այն է, որ ժողովուրդը հաւատով չի վերաբերւում գէպի այս հիմնարկութիւնները: Մտրդիկ սխալւում են, կարծելով, որ իբր թէ այնտեղ ուղարկւում են միայն անյոյս հիւանդներին և այնտեղ մանելուց յետոյ այլևս դուրս գալ չի կարելի: Այս կարծիքին հակառակ, հիւանդանոցում կան այնպիսի յարմարութիւններ, որպիսին ազբատները երբէք իրանց

տներում չունին: Այնտեղ թէ բնակարանը, թէ ուտելիք-խմելիքը, թէ պաշտպանողական միջոցները լաւ են և որ գլխաւորն է, հիւանդը գտնուում է միշտ բժշկի հսկողութեան տակ:

Այս էլ պէտք է գիտենալ, որ հիւանդին տանից հեռացնելն էլ պակաս բարիք չէ, քանի որ հիւանդին ներկայութիւնը տան մէջ մշտական սպառնալիք է ընտանիքի միւս անդամներին: Հեռացնելով հիւանդին տանից, դրանով հեռացրած կը լինիք վարակման աղբիւրը:

Եթէ հիւանդը տանն է բժշկուում, նրան պէտք է առանձին սենեակ յատկացնել և հիւանդին միայն մէկ մարդ պէտք է խնամէ, իսկ այդ խնամողը ոչ սքի հետ չպէտք է յարաբերութիւն ունենայ: Հիւանդի փոխնորդը, շորերը և այլ իրեզիւնները աւելի լաւ է այրել, իսկ ինչ որ չի կարելի այրել, պէտք է ախտահանել: Հիւանդի առողջանալուց կամ մեռնելուց յետոյ նրա բնակարանը պէտք է ախտահանել բժշկի միջոցով: Ժանտախտի դէմ ամենալաւ ախտահանիչ միջոցը կրակն է: Ժանտախտով վարակու-

ած իրերը այն աստիճան երկիւղալի են, որ լաւ է նրանց ոչնչացնել, քան թէ խնայել և շարունակ երկիւղի մէջ լինել: Եթէ այրելն անհնար է, պէտք է այդ իրեզիւնները լաւ եփ տալ եռացած ջրում, յետոյ սապոնով լուանալ ու շորացնել:

Հ ա մ ա ճ ա ր ա կ ի ժ ա մ ա ն ա կ պէտք է միշտ տանը ունենալ հետևեալ ախտահանիչ դեղերը:


1) Յարմարն ու էթանը կիրն է: Յանկալի է որ ամեն տան մէջ կիր լինի և ունենալ կրի մեծ պահեստ: Չոր կիրը ցանում են ուղղակի հիւանդի արտազրութիւնների և բոլոր կեղտոտութիւնների վրայ:

2) Կարբօլկա կամ կարբօլեան թթուութը, որից կազմում են ամեն տեսակ խառնուրդ: Վերցնում են մի թէյի գդալ կարբօլկա, խառնում են մի բաժակ ջրի հետ: Այս խառնուրդը (2 մ.—100 մ.) կարելի է գործ ածել հիւանդապահի ձեռները լուանալու համար, իսկ կեղտոտ իրերը լուանալու համար, պէտք է գործ ածել երկու անգամ սաստիկ խառնուրդ:

3) Սուլէման (սուլէյմանի) ամենագօրեղ ախ-

տահանիչ միջոցն է, որը սաստիկ թոյն լինելով՝  
կարելի է գործ ածել միայն բժշկի խորհրդով:

Հիւանդներին առաջին օգնութիւն տալու հա-  
մար, մինչև բժշկի գալը կարելի է տալ հետևեալ  
գեղերը. 1) Վալերեանի կաթիլներ և 2) Նօֆմանի  
կաթիլներ 20 կաթիլ մի հացի գդալ ջրի հետ:




« Ազգային գրադարան



NL0074757

ՅՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏՐԱՏ ԵՆ

- 1. Գիֆտերիտ,
- 2. Քուլթեզ,
- 3. Կապուտուկ



Գրմել Գ. Ստեփանեանի գրախճառանոցը.

Александрополь (Эрив. губ.)

Закавказская книжная торговля Степанянца.

